12-ը փետրվարի, 2021թ.

Կալիֆորնիայի Զարգացման խնդիրներով անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտի կարևոր հաղորդագրությունը.

«Հաղորդակցում շահառուների հետ COVID-19-ի պատվաստման իրավունակության վերաբերյալ»

Ի՞նչ պետք է իմանալ

65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց դեպքում ձեր տարածքային կենտրոնը կկապվի ձեր և ձեր ընտանիքի հետ՝ օգնելու ձեզ հնարավորինս շուտ ստանալ պատվաստումը:

Բարձր ռիսկային խմբում գտնվող 16-ից 64 տարեկան անձինք կբավարարեն պատվաստումը 2021թ. մարտի 15-ից հետո ստանալու պայմաններին:

Ի՞նչ է փոխվելու

65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց պաշտպանությունն ապահովելու համար, որոնք գուցե դեռ չեն ստացել պատվաստում, տարածքային կենտրոնները կապ կհաստատեն նրանց և (կամ) նրանց խնամատուների հետ, որպեսզի.

- Տեղեկացնեն, թե ինչպես պետք է գրանցվել և որտեղ պատվաստվել
- Տրամադրեն պատվաստանյութն ստանալու օգնության տարբերակներ
- Խոսեն պատվաստանյութի անվտանգության մասին՝ օգտվելով, օրինակ, դեպարտամենտի հաճախ տրվող հարցերից
- Հարցնեն, թե արդյո՞ք արդեն ստացել եք պատվաստանյութը և երբ

Սկսած 2021թ. մարտի 15-ից՝ բուժհաստատությունները կկարողանան պատվաստել 16-ից 64 տարեկան այն անձանց, որոնք գտնվում են COVID-19-ով ծանր հիվանդանալու և մահանալու ամենաբարձր ռիսկային խմբում:

Պատվաստումն ստանալու հատուկ պայմաններին համապատասխանող առողջական խնդիրների ցանկը տե՛ս DDS-ի հրահանգի ամբողջական տեքստում: Այս տեղեկությունները կարող են փոխվել, քանի որ գիտնականները կատարում են նոր բացահայտումներ:

Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ պատվաստումն ստանալու իրավունակություն ունենալը դեռ չի նշանակում, որ այն կստանաք հենց հիմա: Այս պահին առկա պատվաստանյութի քանակությունը սահմանափակ է:

Հարցե՞ր կան

Խնդրում ենք կապվել ձեր տեղական տարածքային կենտրոնի հետ: Եթե նրանք չկարողանան օգնել ձեզ, դիմեք էլ. փոստով՝ DDSC19@dds.ca.gov

Իմանալ ավելին

Հաղորդակցում շահառուների հետ COVID-19-ի պատվաստման իրավունակության վերաբերյալ

DDSC19@dds.ca.gov
www.dds.ca.gov/corona-virus-information-and-resources/